սաղէմի (տպագր. 1890), և վախճանած է ի Կ. Պոլիս, Սահակ Պարթեւի տօնին երեկոյին, 1754 Փետր. 5ին։

Իրեն իբր յաջորդած է՝ 1750էն ետքը՝ Թուրքահայոց երկրորդ մեծ թանգարը 18րդ դարուն, Ակնցի Եաղուպ աղան, որ նորոգած է հիմէն Մուշի Ս. Կարապետի վանքը(¹), որ և մեծարուած էր Կ. Պոլիսի ամէն ազգաց ժողովուրդներէն, և Թուրքահայերուն մէջ՝ 1453էն ի վեր՝ ցայնվայր հաղիւ երկու հոգի տեսնուած էր հաւասարապատիւ և հաւասարահարուստ իրեն. մա՛րդ՝ Ղազէզ Յարութիւնի նման։

Այս Եաղուպ աղայ Յովհաննէսեան՝ ձեռնտու էր նաև Նալեան Յակոբ Պատրիարքին շատ գործերու մէջ, և Նալեան ալ՝ իր Երուսաղէմի պատրիարքութեան միջոցին՝ կը թղթակցէր անոր հետ շատ անգամ և կը հրաւիրէր ուխտի յԵրուսաղէմ՝ անուանելով զայն, իր վաճառական ընդարձակ գործառնութեանց համար, վանառապետ արքունի, նոր Յովսէփ գեղեցիկ ժամանակին ու երկրորդ Զորաբաբէլ տաճարաշէն։ Եաղուպ աղայ Երուսաղէմ ուխտագնաց ըլլալով՝ դարձին իր հետ բերաւ Կ. Պոլիս ու մայրաքաղաքին Պատրիարքութեան աթոռը բազմեցուց Նալեան Սրբազանն՝ ըստ թախանձագին փափագի այս վերջինին։

Կա՛ն մինչեւ ցայսօր Ս. Յակոբեանց վանքին մէջ՝ Պէքևար թաղի կից երկու շնորհքով հինաւուրց սենեակ, որ կը կոչուին Եաղուպ աղայի չարտախ։ Կա՛ր նաև նոյն վանքին մէջ պղընձի յիշատակարան տախտակ մը, որուն վրայ մի առ մի գրուած էին Եաղուպ աղայի բարեպաշտական ընծաներն ու յիշատակները՝ նուիր-

---

(¹) Յովհ. Հաննայ. Պատմ. Երուսաղէմի։ Տպագրութիւն Բ. 1767, (էջ 139)։